

ի մահ կտտել կաթողիկոսը. բայց յետոյ Ամիրզոունէ խանին եւ Մելիք Հայկազնի բարեխօսութեամբ մեղմացաւ, վճռեց. կա'մ մահ եւ կամ 300 թուման տուգանք եւ հրաժարում կաթողիկոսութենէն. «ոչ սպանանեմ եւ ոչ թողում, այլ այնպէս կապանօք պահեմ մինչեւ կամ մեռցի եւ զերծցի եւ կամ տացէ զ300 թուման դրամն, զոր հրամայել եմ, եւ ազատեսցի» (218—219): Յանհնարինս մտնելով Մելքիսեղեկ եւ միանգամայն իւր հակառակորդներու հանդէպ ապահովելու համար իւր դիրքը կ'առաջարկէ Շահին. «եթէ... տացէ զիշխանութիւն կաթողիկոսութեան մեզ, մեք սամք սամ յամէ ի դիւան թագաւորին յիւրաքանչիւր տարի 100 թուման ոռճիկս ծառայից թագաւորին»: Արծաթասէր շահը նկատելով առաջարկս պետական դանձին համար աւելի նպաստաւոր, կը զիջի. «ետ նմա զիշխանութիւն կաթողիկոսութեան՝ հանդերձ թագաւորականն ոմոսիւ գրեալ եւ կնքեալ» (1615^o): Իսկ ուրիշներ հաւաստած են Դաւրիժեցւոյ, թէ Մելքիսեղեկ, երբ կը գտնուէր «ի կապանս երկաթեայ», խնդրած ըլլայ Շահէն որ թոյլ տայ այն 300 թուման տուգունքը երեք տարւոյ ընթացքին վճարել երեք բաժնով: Առ այս Շահը հաւանելով տուած է Մելքիսեղեկի ձեռքը թուղթ մը թէ «Մելքիսեղեկ յանձն կ'առնէ երեք տարւոյ ընթացքին վճարել 300 թուման տուգունքը». բայց պետական դիւանի մատենին մէջ անցնել տուած է նենգութեամբ. «Մելքիսեղեկ կաթողիկոս խնդրեաց զիջ-